

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2018 թվականի առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 31 որոշումներ, 57 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 75 հրամաններ. հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ:

2018 թվականի հուլիսի 02-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 3610 և ելք են արվել 4547 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

2018 թվականի առաջին կիսամյակում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում անց է կացվել առողջապահության և սոցալ վարչության պետի մրցույթը, սակայն մրցույթում հաղթող չի ճանաչվել:

Մարզպետարանի աշխատակազմում 2018թ հուլիսի 2-ի դրությամբ թափուր են աշխատակազմի 4 քաղաքացիական ծառայողների և 3 հայեցողական պաշտոնների հաստիքներ:

Սահմանված կարգով իրականացվել են աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված փարբեր ժամանակահատվածներում երկօրյա մասնագիտական վերապատրաստում անցան աշխատակազմի թվով 14 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2018 թվականի առաջին կիսամյակում մարզպետի մոտ կատարվել է 682 քաղաքացիների ընդունելություն:

Կիսամյակի ընթացքում ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմի, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 21 դիմումներ, որից՝ 2-ը ստացվել են Ջերմուկի, 9-ը Վայքի, 10-ը Եղեգնաձորի փարածաշրջանից: 2018 թվականի առաջին կիսամյակում 590 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 22 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 7-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն:

Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

**2017 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 682 քաղաքացիներ, որից՝**

1. Դրամական օգնություն	590
2. Նպաստի հարցերով	13
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	16
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	2
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	3
6. Աշխատանքի տեղավորման	15
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	3
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	22
9. Պետ.պատվերով բուժօգնություն	7
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	2
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	3
12. Այլ հարցերով	6

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան